ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-35/22 ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստ

Գավառ, Կենտրոնական հրապարակ 7 **19 «10» 2022թ.**
ժ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Յուրա Մուշեղյան
Գնահատող անդամներ՝ Աննա Սաֆոյան, Սևակ Դվոյան
Բացող անդամներ՝ Գուրգեն Մելքոնյան, Արսեն Մելքոնյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Արթուր Բադեյան

ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-35/22 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի մասին.

Հայտերը բացվել են armeps համակարգի միջոցով 2022թ. սեպտեմբերի 19-ին՝ ժամը 12:00-ին:

Ուսումնասիրելով ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-35/22 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերը պարզվեց, որ՝

- *Գնման ընթացակրգը կազմակրպվել է չպահպանելով*
    1. *<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի Հոդվածի 22-ի 1-ին կետի պահանջները, այն է՝* գնումը կարող է կատարվել գնանշման հարցման ձևով, եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի ութսունապատիկը, սակայն հայտարարված հրավերի մի քանի չափաբաժին գերազանցում էր գնումների բազային միավորի ութսունապատիկը, որի դեպքում պետք է կիրառվեր բաց ընթացակարգով գնում կատարելու պայմանները:
    2. *<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի Հոդվածի 22-ի 3-ի կետի պահանջները, այն է՝* գնանշման հարցման ընթացակարգի կիրառման դեպքում հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետն առնվազն յոթ օրացուցային օր է, որը հաշվարկվում է տեղեկագրում գնումների հայտարարության և հրավերի հրապարակման օրվանից, սակայն մրցույթը հրապարակվել էր չապահովելով օրենքով սահմանված 7 օրացուցային օրը:
    3. *Ինչպես նաև ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-35/22 ծածկագրով գնանշման հարցման* ընթացակարգի հրավերի հավելված 1.1-ը՝ տեխնիկական վրիպակի պատճառով հրապարկվել էր ֆինանսների նախարարի կողմից հաստատված հրավերի օրինակելի ձևերին անհամապատասխան, որը հանգեցրել էր գնահատող հանձնաժողովի կողմից armepss էլ. Համակարգի միջոցով գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերի N 1.1 հավելվածի գնահատման անհնարինությանը:

Հիմք ընդունելով ՀՀ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի դրույթները՝ հանձնաժողովը որոշեց

1. Լուծարել ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-35/22 ծածկագրով գնանշման հարցման հրավերը և վերոնշյալ թերությունները շտկելուց հետո հրապարակել նոր մրցույթ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նախագահ՝ _____ Յու. Մուշեղյան

Անդամներ՝ _____ Ա. Սաֆոյան

_____ Ս. Դվոյան

_____ Գ. Մելքոնյան

_____ Ա. Մելքոնյան

Քարտուղար՝ _____ Ա.Բաղեյան